ՀԱՎԵԼՎԱԾ

Հաստատված է նոր խմբագրությամբ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ Տնօրինության

17.11.2022թ. թիվ 96-Լ որոշմամբ

Ուժի մեջ է 18.11.2022թ.

ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԵՆԻՇԱՅԻՆ/ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ (ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

ՀՀ Կառավարության «Տնտեսության արդիականացման միջոցառման» շրջանակներում տրամադրվող վարկեր/լիզինգներ

Պայման	Վարկ	Լիզինգ
Նվազագույն և առավելագույն գումարը/ ՀՀ դրամ	1,000,000 ՀՀ դրամից մինչև 1,000,000,000 ՀՀ դրամ	1,000,000 ՀՀ դրամից մինչև 1,000,000,000 ՀՀ դրամ
Թիրախային ընկերությունների սեգմենտ	Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված և փաստացի գործունեություն իրականացնող մասնավոր առևտրային կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր (բացառությամբ լիցենզավորվող գործունեություն իրականացնող (բացառությամբ առողջապահության, տրանսպորտի և կրթության բնագավառի կամ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների)	
Առավելագույն ժամկետ	120 ամիս	
Առավելագույն մայր գումարի վճարման արտոնյալ ժամանակաշրջան /ամիս/	ՀՀ դրամով վարկի/լիզինգի դեպքում 6 ամիս, իսկ արտարժույթով վարկի/լիզինգի դեպքում՝ 3 ամիս	
Սուբսիդավորման ժամանակահատվածը	Մինչև 200 մլն ՀՀ դրամի համարժեք գումարի դեպքում մինչև 42 ամիս, իսկ ավելի քան 200 մլն ՀՀ դրամին համարժեք գումարի դեպքում՝ մինչև 36 ամիս	
Անվանական տոկոսադրույք[1]		
ՀՀ դրամով ֆիքսված տոկոսադրույք Փոփոխական տոկոսադրույք(25-րդ ամսից սկսած)[2]	14.50%-15.50% 13.50%- 14.50%	14.50%-15.50% 13.50%- 14.50%
ԱՄՆ դոլարով ֆիքսված տոկոսադրույք Փոփոխական տոկոսադրույք(25-րդ ամսից սկսած) [2]	10.00%- 11.00% 9.50%- 10.50%	10.00%- 11.00% 9.50%- 10.50%
Եվրոյով ֆիքսված տոկոսադրույք Փոփոխական տոկոսադրույք(25-րդ ամսից սկսած)[2]	8.00%- 9.50% 7.50%- 8.50%	8.00%- 9.50% 7.50%- 8.50%
ՀՀ դրամով տրամադրված վարկերի/լիզինգների տոկոսադրույքներ սուբսիդավորման չափ	8%	10%
Արտարժույթով տրամադրված վարկերի/լիզինգների տոկոսադրույքներ սուբսիդավորման չափ	6%	8%
Վաղաժամկետ մարման դեպքում	0%	

տույժ մարվող գումարից	
Հատուկ նշումներ	1. Տնտեսավարողը, որի կանոնադրական կապիտալում 200 մլն դրամ և ավելի գումարի չափով ներդրում է կատարվել 2021 թվականի հունվարի 1-ից մինչև աջակցության հայտը ներկայացնելու պահը, օժանդակության գործիքի ներքո տրամադրվելիք վարկերի/լիզինգի սուբսիդավորվող մասի առավելագույն գումարը կարող է սահմանվել կանոնադրական կապիտալում կատարված ներդրման հնգապատիկի չափով, բայց ոչ ավելի, քան 10 մլրդ դրամ, իսկ արտարժույթով վարկավորման դեպքում՝ 5 մլրդ դրամին համարժեք, 2. Կանոնադրական կապիտալի ավելացումները պետք է իրականացված լինեն դրամական միջոցների տեսքով ներդրումների հաշվին: Ընդ որում, սուբսիդավորման ամբողջ ժամանակահատվածում կանոնադրական կապիտալի նվազեցում չի թույլատրվում, 3. Նախատեսված արտոնությունից օգտվող տնտեսավարողները մինչև վարկի/լիզինգի պայմանագրի ստորագրումը պարտավոր են ֆինանսական կազմակերպությանը ներկայացնել կանոնադրական կապիտալի համալրումը հավաստող փաստաթղթեր, ինչպես նաև պայմանագրի ստորագրմանը հաջորդող տարվա ընթացքում և դրան հաջորդող սուբսիդավորման տարիների ամբողջ ընթացքում պարտավորվում են ներկայացնել ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան հաշվետվություններ, ինչպես նաև «Մեծ Քառյակ» աուդիտորական ընկերությունների կողմից արտաքին աուդիտի եզրակացություն: 4. Թիվ 2 և 3 կետերում նշված պայմանների խախտման դեպքում տվյալ տնտեսավարողին տրամադրված վարկը/լիզինգը ենթակա է մարման բացահայտումից հետո անհապաղ, իսկ պետության կողմից վճարված սուբսիդավորման գումարները բանկի միջոցով ենթակա են վերադարձման՝ ֆինանսական կազմակերպության և տնտեսավարողի միջև կնքվող պայմանագրով ամրագրված կարգով:
	,

[1]- Արտահանող ընկերություններին տրամադրվում են հավելյալ զեղջեր և արտոնություններ

[2]- Փոփոխական դրույքաչափով տոկոսադրույք սահմանելիս Բանկը յուրաքանչյուր դեպքում պայմանագրով սահմանում է փոփոխական հիմնական ցուցանիշը (ՀՑ), որի փոփոխությամբ պայմանավորված են լինելու հետագա դրույքաչափի փոփոխությունները, ինչպես նաև բանկի մարժան՝ հաստատուն բաղադրիչը: Փոփոխական հիմնական ցուցանիշների սահմանման և տոկոսադրույքի վերանայման կանոնները հետևյալն են՝

ՀՀ դրամով վարկերի/լիզինգի դեպքում 25-120 ամիսների համար ՀՑ1*(հիմնական ցուցանիշ),+(1.750%-3.25%), հիմնական ցուցանիշի անհասանելիության դեպքում ՀՑ11(երկրորդային ցուցանիշ)+(4.250%-5.50%

ՀՑ1-ն (Հիմնական ցուցանիշ ՀՀ դրամով տրամադրվող վարկերի համար) ՀՀ պետական արժեկտրոնային 6 ամսվա պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորի տոկոսադրույքն է, որն արտացոլվում է https://www.cba.am/am/SitePages/fmofinancialmarkets.aspx էջում: Եթե հիմնական ցուցանիշը դառնում է անհասանելի, և անհնարին է դառնում լողացող տոկոսադրույքի սահմանումը հաջորդ ժամանակահատվածի համար, ապա հիմք է ընդունվում երկրորդային ցուցանիշը՝ ՀՏ21, որն իրենից ներկայացնում է ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակվող ՀՀ առևտրային բանկերի կողմից ներգրավված 181 օրից-1 տարի

ժամկետայնությամբ դրամային ավանդների միջին կշռված տոկոսադրույքը, որն արտացոլվում է https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx - էջում:

Վարկի լողացող տոկոսադրույքը ՀՀ դրամի դեպքում՝ կարող է փոփոխվել (բարձրանալ կամ նվազել) հաստատված տոկոսադրույքից առավելագույնը 4%-ով (առավելագույն և նվազագույն շեմ):

ԱՄՆ դոլարով վարկերի/լիզինգի դեպքում 25-120 ամիսների համար ՀՑ2* (հիմնականցուցանիշ) + (4.75%-6.00%), հիմնական ցուցանիշի անհասանելիության դեպքում ՀՑ21(երկրորդային ցուցանիշ) + (6.75%-8.0%)

ՀՑ2-ն (Հիմնական ցուցանիշ ԱՄՆ դոլարով տրամադրվող վարկերի համար)

ԱՄՆ Գանձապետական ուղենիշային պարտատոմսերի 6 ամսվա մինչև մարում եկամտաբերության կորի տոկոսադրույքը, որն արտացոլվում է https://www.treasury.gov/resource-center/data-chart-center/interest-rates/Pages/TextView.aspx?data=yield էջում:

Եթե հիմնական ցուցանիշը դառնում է անհասանելի, և անհնարին է դառնում լողացող տոկոսադրույքի սահմանումը հաջորդ ժամանակահատվածի համար, ապա հիմք է ընդունվում երկրորդային ցուցանիշը՝ ՀՏ21 որն իրենից ներկայացնում է ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակվող ՀՀ առևտրային բանկերի կողմից ներգրավված 181 օրից մինչև 1 տարի ժամկետայնությամբ դոլարային ավանդների միջին կշռված տոկոսադրույքը, որն արտացոլվում է https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx - էջում:

Վարկի լողացող տոկոսադրույքը ԱՄՆ դոլարի դեպքում՝ կարող է փոփոխվել (բարձրանալ կամ նվազել) հաստատված տոկոսադրույքից առավելագույնը 3%-ով (առավելագույն և նվազագույն շեմ):

Եվրոյով վարկերի/լիզինգի դեպքում 25-120 ամիսների համար ՀՑ3[1] (հիմնական ցուցանիշ) + (5.00%-6.25%) հիմնական ցուցանիշի անհասանելիության դեպքում ՀՑ3[1](երկրորդային ցուցանիշ) +(5.50%-6.75%)

ՀՑ3-ն (Հիմնական ցուցանիշ Եվրոյով տրամադրվող վարկերի համար) Եվրոպական դրամական շուկայի ինստիտուտի կողմից (EMMI) 6 ամսվա համար ԵՎՐՈ-ով եվրագոտու միջբանկային առաջարկվող դրույքը որն արտացոլվում է https://www.emmi-benchmarks.eu/euribor-org/euribor-rates.html էջում կամ Արմսվիսբանկ ՓԲԸ տնային կայքէջում: Եթե հիմնական ցուցանիշը դառնում է անհասանելի, և անհնարին է դառնում լողացող տոկոսադրույքի սահմանումը հաջորդ ժամանակահատվածի համար, ապա հիմք է ընդունվում երկրորդային ցուցանիշը՝ ՀՑ3[1], որն իրենից ներկայացնում է Եվրոմիության Գանձապետական ուղենիշային պարտատոմսերի 6 ամսվա մինչև մարում եկամտաբերության կորի տոկոսադրույքը, որն արտացոլվում է https://www.ecb.europa.eu/stats/financial_markets_and_interest_rates/euro_area_yield_curves/html/index.en.html էջում:

Վարկի լողացող տոկոսադրույքը Եվրոյի դեպքում՝ կարող է փոփոխվել (բարձրանալ կամ նվազել) հաստատված տոկոսադրույքից առավելագույնը 2%-ով (առավելագույն և նվազագույն շեմ):

Փոփոխական տոկոսադրույքով տրամադրվող վարկերի տոկոսադրույքները, անկախ տրամադրման ամսաթվից, ենթակա են վերանայման կես տարին մեկ՝ փետրվար և հուլիս ամիսների առաջին աշխատանքային օրը, ժամը 12.00 դրությամբ գործող դրույքին համապատասխան, ընդ որում, փոփոխությունն ուժի մեջ է մտնում վերջինիս մասին հաճախորդին ծանուցելուց 7 աշխատանքային օր հետո: Որոշ դեպքերում, պայմանագրով կարող են սահմանվել տոկոսադրույքի վերանայման այլ ժամկետներ: